**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2**

**<< Թ22ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-2021>> ծածկագրով մրցույթի հանձնաժողովի բացման և գնահատման նիստի**

**ք. Երևան** **11.01.2021թ.**

**Ժամը՝ 14:00-ին**

*Մասնակցում էին՝*

*Հանձնաժողովի նախագահ՝ Կ.Թորոսյանը*
*Անդամներ՝ Ս.Զաքարյանը, Ա.Գևորգյանը, Ա.Չոբանյանը*
*Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Դեմիրճյան*

***1. Տեղեկատվություն՝ հայտերի բացման վայրի, օրվա, ժամի մասին.***

*1.1.* Գնային առաջարկներ պարունակող ծրարները բացվել են <<թիվ 22 պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի շենքում, ք. Երևան, Նոր նորքի 7-րդ զանգ., Ավետիսյան 5/7 հասցեում, 2021 թվականի հունվարի 11-ին, ժամը 14:00-ին:

***1.2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և հասցեները.***

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը |
|---|---|---|
| 1 | <<Լեյկո>>ՍՊԸ | Ք.Երևան, Ֆուչիկի 27/14 |
| 2 | <<ԱԼՖԱ ՖԱՐՄ >> ՓԲԸ | Ք.Երևան, Շիրակի 1/68 |
| 3 | <<ԱԼՖԱ ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ >> ՓԲԸ | Ք.Երևան, Շիրակի 1/68 |
| 4 | <<Արֆարմացիա>>ՓԲԸ | Ք.Երևան, Րաֆֆու 111 |
| 5 | <<Նատալի Ֆարմ>>ՍՊԸ | Ք.Երևան, Օհանովի 15/1 |
| 6 | <<Նատալի Ֆարմ Դեղատուն>>ՍՊԸ | Ք.Երևան, Օհանովի 15/1 |
| 7 | <<ՋԻԱՐՋԻ>>ՍՊԸ | Ք.Երևան, Աբովյան 23 |
| 8 | <<Մեդիկալ Հորիզոն>>ՍՊԸ | Ք.Մասիս, Մասիս-Կայարան, Հրանտ Վարդանյան 22 |
| 9 | <<Արփիմեդ>> ՍՊԸ | Ք. Աբովյան, 2-րդ մասնաճյուղ, 19շենք |
| 10 | <<Ռիխտեր_լամբրոն>> ՀՁ ՍՊԸ | Ք.Երևան, Ղ.Փարպեցու 22/14 |

***1.3. Տվյալներ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության մասին.***

Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են սահմանված պահանջներին համապատասխան:

***1.4 Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր առաջարկում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.***

Բոլոր մասնակիրցների կողմից ներկայացվել են հրավերով պահանջված բոլոր փաստաթղթերը:

***1.5 Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:***

Բոլոր մասնակիրցների հայտերը կազմված են եղել հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ՝

- ԱԼՖԱ-ՖԱՐՄ ՓԲԸ-ի գնման հայտում՝ 1.1 հավելվածում, 108-րդ չափաբաժնի համար առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրին (5մգ է գրված 10մգ-ի փոխարեն)
- Ռիխտեր-Լամբրոն ՀՁ ՍՊԸ-ի գնման հայտում՝ հավելված 1-ում բացակայում է բանկի անվանումն ու բանկային հաշվեհամարը
- Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ-ի գնման հայտում՝ 1.1 հավելվածում, 23-րդ չափաբաժնի համար առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրին (667մգ/մլ է գրված 670մգ/մլ -ի փոխարեն)

- Արֆարմացիա ՓԲԸ-ի գնման հայտում՝ հավելված 1-ում բացակայում է բանկի անվանումն ու բանկային հաշվեհամարը,իսկ 1.1 հավելվածում, 23-րդ չափաբաժնի համար առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրին (667մգ/մլ է գրված 670մգ/մլ -ի փոխարեն)
- Նատալի Ֆարմ Դեղատուն ՍՊԸ-ի գնման հայտում՝ հավելված 1-ում բացակայում է բանկի անվանումն ու բանկային հաշվեհամարը

***Համաձայն 2017թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի վերը նշված Ընկերություններին տրամադրվել է մեկ աշխատանքային օր՝ մինչև նիստի կասեցման ժամկետի ավարտը հունվարի 14-ը շտկել անհամապատասխանությունը:***

**Սահմանված ժամկետում մասնակիցները շտկել են բոլոր անհամապատասխանությունները հրավերի պահանջների նկատմամբ:**

<<Արփիմեդ>> ՍՊԸ-ի գնառաջարկը մերժվել է 46-րդ չափաբաժնի մասով: ԱԱՀ-ի և արժեքի տառերով և թվերով գրված գումարները համապատասխան չեն ընդհանուր գնի սունյակում տառերով գրված հանրագումարին:

<<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ-ի հայտը մերժվել է ամբողջությամբ: Հայտում առկա բոլոր փաստաթղթերում բացակայում է մրցույթի ծածկագիրը:

1.6 *Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած գինը.*

Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած գինը տես հավելված 1-ում:

**1.7 Տեղեկատվություն 2017թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ մասի պահանջներով բանակցությունների վարման ,՛օրվա և ժամի վերաբերյալ.**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ մասի պահանջներով՝ ոչ գնային պայմանները բավարար գնահատված Ընկերությունների տնօրենները կամ համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները՝ համապատասխան լիազորագրով, հրավիրվում են բանակցությունների ք. Երևան, Նոր Նորքի 7-րդ զանգված Ավետիսյան փողոց 5/7 հասցեում՝ <<Թիվ 22 պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի շենքում, Թ22ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-2021 ծածկագրով մրցույթի բոլոր չափաբաժիններում ներկայացված ապրանքների գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով: Էլեկտրոնային փոստի միջոցով գնառաջարկները /գնային նվազեցումը/ չի ընդունվում:

**Բանակցությունների օրն ու ժամը՝ 2021 թվականի հունվարի 21, ժամը 14:00:**

Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից չեն ներկայացվել:

**Հաջորդ նիստը տեղի կունենա հունվարի 21, ժամը 14:00:**

***3. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները ազգանունները.***

*Հանձնաժողովի նախագահ՝* ____________ *Կ.Թորոսյան*

*Անդամներ՝* ____________ *Ս.Զաքարյան*

____________ *Ա.Գևորգյան*

____________ *Ա.Չոբանյան*

*Քարտուղար՝* ____________ *Ս. Դեմիրճյան*